

Ս.Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ «ՎԱԽ» ԻՄԱՍՏՈՎ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ  
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դիտարկվում է ռուսաց լեզվում «վախ» հասկացությամբ դարձվածաբանական միավորների հուզականության հարցը: Վերլուծվում են դարձվածաբանական միավորներին առնչվող այն դրդապատճառները, որոնք առաջացնում են վախի հոգեվիճակ:

**Առանցքային բառեր.** դարձվածաբանական միավորներ, հայեցակարգ, իմաստաբանություն, վախ, բազմազանություն:

S.S. MARTIROSYAN

**SEMANTICS OF PHRASEOLOGICAL UNITS MEANING FEAR IN THE  
RUSSIAN LANGUAGE**

The article considers the emotivity of phraseological units meaning fear in the Russian language. The motivations in phraseological units that convey the state of fear are analyzed.

**Keywords:** phraseological unit, concept, semantics, fear, diversity.

ՀՏԴ 821.19/ 161.1

Բ.Ժ. ԳԱԼՍՅԱՆ

**ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Դիտարկվում են Վ. Սարոյանի գրական հայացքները ռուս գրականության և ռուս գրողների մասին:

**Առանցքային բառեր.** ռուս գրականություն, ազգային և համամարդկային միասնություն, հոգեբանական խորություն, կերպար, իրապաշտություն, գեղարվեստական մտածելակերպ, անհատականություն:

Վ. Սարոյանը գեղագիտական հատուկ աշխատություն չի գրել: Երբ ի մի ենք բերում նրա՝ տարբեր ժամանակներում, տարբեր բնույթի երկերում սեղմ, հաճախ ծայրահեղ հակիրճությամբ արտահայտած գեղագիտական մտքերը, տեսնում ենք, որ դրանք բավականաչափ ավարտուն ամբողջություն են: Գրողը չի բավարարվել գեղագիտական տարաբնույթ հարցերի (գրականության բուն առարկա, ձևի և բովանդակության համամասնություն, ոճ և գրողի ինքնատիպություն, գրական ժանրեր, գրականություն և բարոյախոսություն, գրականության ժողովրդայնություն, գրական ազդեցություն) քննությամբ, իր համակ ուշադրությունը բևեռել է ինչպես ամերիկացի, եվրոպացի, հայ, այնպես էլ ռուս գրողների վրա և նրանց տվել իր սարոյանական բնութագրումները:

Վիլյամ Սարոյանը մեծ տեղ է հատկացնում ռուս գրականությանը, որից, ինչպես ինքն է ասում, «շատ բան ունի յուրացնելու թե՛ համաշխարհային, թե՛ հայ գրականությունը»: Նա կրկնում է Արշակ Չոպանյանի՝ 19-րդ դարի վերջին ասված խոսքերը. «Ռուս գրականությունը Ասիո վրա տարած մտավոր տիրական գրականություն ըլլալու սահմանված է, ռուս մտածումն ու ռուս արվեստը պետք է ծանոթ դառնան օտարներու և հայերու ամբողջությանը» [1, էջ 92]: Սարոյանը ռուս գրականությունը համարում է մարդկության գեղարվեստական մտքի բարձրագույն արտահայտություն:

«Ռուսական գրականությունը կարևոր մեծ մաս մըն է աշխարհի կարդացողներուն, որովհետև ռուսներ ունին ան տեսակ մարդիկ, ան տեսակ հոգի մարդիկ, որ ուրիշ ազգեր չունին,- գրում է Սարոյանը, - մի քանի գրականություն կա. մեկը անգլիական, երկրորդը ռուսականը, երրորդը ֆրանսիականը, չորրորդը գերմանականը, հինգերորդը՝ հայկական, երբ կկարոտնամ մեծ հոգի մարդկանց, ռուսներու գրություն կկարդամ, որովհետև անոնց գրության մեջ միշտ ունին մեծ հոգի: Եվ բանալուն պես, գիրք մը բանալուն պես ռուս լավ գրագետներուն անմիջապես մարդ կզգա հանգիստ, ասեր է թե լավ աշխարհք մը, լավ աշխատանքի մը Թոլսթոյ, Դոստոևսկու, Թուրգենև...» [2, էջ 116]:

Ռուս գրողներից Սարոյանին սիրելի են Լ.Տոլստոյը, Ֆ. Դոստոևսկին, Ա.Չեխովը, Ն.Գոգոլը:

Սարոյանն առանձնապես բարձր է գնահատում Ֆ. Դոստոևսկուն՝ շեշտելով նրա ստեղծագործության ոգու զորությունը, վեպերում բացված ռուս ժողովրդի ուրույն հոգին, ազգայինի և համամարդկայինի կատարյալ միասնությունը, «ամեն ինչ բացահայտորեն ըսելու թվաբանությունը... կամ լույսին պես, և այդ նույն ամեն ինչը խորհուրդներու մտապատ անդունդին մեջ մխրճելու խռովիչ արվեստը» [2, էջ 120]:

Նրան հիացնում են հանճարեղ վիպասանի հարցադրումների մեծությունը, հոգեբանական խորությունը, կրքերի ու կերպարների վիթխարի բախումը, անհատականության այն հանրագումարը, որ թեթև բառով ոճ կարելի է կոչել: Հատկապես հիացնում է Դոստոևսկու փիլիսոփայությունը, որը վեր է դասում 2. Ֆրոյդի փիլիսոփայությունից: Սարոյանի համոզմամբ՝ աշխարհում չկա Դոստոևսկու նման փիլիսոփա գրող, նրա ուրույն փիլիսոփայական համակարգն աշխարհի փիլիսոփայության բարձրակետն է:

Լ. Տոլստոյի մասին նրա խոսքն ունի նույն պատկառանքը: Ի տարբերություն արտասահմանի «տոլստոյականների», որոնք փորձել են գրողի մտորումները, խորհրդային կարգերի ժամանակ տարածում գտած, այսպես կոչված, «պահպանողական» գծերը բացարձակացնել, Սարոյանը բարձր է գնահատել ռուս գրողի

անմիջական գայրույթն ընդդեմ ստի, ընկերության անողոք վերլուծությունը և ռուսական պարզ հոգու գեղարվեստական հայտնությունը: «Թուխթոյի մտածումներն իսկ չեն, որ կներկայացնեն իր ուժը կամ ինքնահաստկությունը: Ան Քրիստոնեությունը ոչ իսկ նորոգեց: Անոր մեծությունը կկայանա իր մտքի սաստկությանը մեջ: Իր արարքովը կխախտեր նաև իր երկրին ընկերային, բարոյական, տնտեսական հիմունքը, և ընդլայնումով՝ ամբողջ աշխարհին» [2, էջ 124]:

Ակնհայտ է, որ Սարոյանը չի եղել «տոլստոյական» փիլիսոփայության կաշկանդող շրջանակներում: Ավելին, նա չի բաժանել այն տեսակետը, թե Լ. Տոլստոյի ստեղծագործության կենսասիրությունը կարելի է երկրորդական դիտել «կրոնական - պահպանողական հայացքների» համեմատությամբ: «Ճիշտ չըլլար Թուխթոյին կրոնական քարոզիչ համարելը: Անոր կրոնը չի հետապնդեր մարդերուն հնազանդեցման, ստրկացման նպատակ, ան կհետապնդե նոր աշխարհի ստեղծման նպատակ, ուր մարդիկ երջանիկ ու ազատ ապրեին՝ հեռու ամեն տեսակ բռնութենեն, անոր կրոնը միջոց մըն էր իր երազներուն իրականացման համար: Կրոնեն գատ Թուխթոյը մարդերը փրկելու ուրիշ միջոց չէր տեսներ» [2, էջ 126]: Սարոյանը բարձր է գնահատում Տոլստոյի իրապաշտությունը, որ «կտարբերվե իմ գիտցած բոլոր գրողներու իրապաշտություններեն: Անոր մեջ ծայրեիծայր կանցնե ճշմարտությունը, կարևորը, սակայն, իրապաշտության մեջ գրողի ունեցած ինքնահատուկ իրապաշտական երկու գիծերն են՝ հերոսներու հոգու բազմակողմանի վերլուծումները և անոնց բնավորության հիմքում դրած բարոյական զգացումի մաքրությունը: Թուխթոյ գրող մըն է, որ կյանքը կներկայացնե իր բազմազանության և ամբողջության մեջ: Չեն գիտեր մեկուն, որ կհավասարվե անոր՝ իր ընդգրկումներով և խորությամբ, իր ճշմարիտ արվեստով»: Ռուս հանճարեղ գրողին Սարոյանը համարում է ուսուցիչ, «որմե միշտ, ամեն օր նոր բան մը կսորվիս, ան երբեք չի սպառվեր, ինչպես չի սպառվեր արևին լույսը» [3, էջ 131]:

Սարոյանը բարձր է գնահատել Տոլստոյի դերը դպրության, գրականության՝ վեպերի, պատմվածքների, պիեսների, բանաստեղծությունների, էսսեների, օրագրությունների և նամակագրությունների աշխարհում, ինչպես նաև պարզ, մատչելի գրելու փորձառությունը, կերպարների վարքագիծը դանդաղ, սակայն հիմնավորապես բացահայտելու հետևողական ջանքը, միջավայրը համակողմանիորեն տեսնելու և ներքնապես ճանաչելու շնորհը: Սարոյանը Տոլստոյի մեջ արժևորում է, առաջին հերթին, ժողովրդի մեջ խոր իմաստությունը տեսնելն ու գնահատելը, որով, ինչպես նշում է գրողը, «մեծագույն արվեստն է ստեղծում հարատևելու, տոկալու, աշատելու, հավատալու, կյանքը, ամբողջ մարդակային ցեղը գնահատելու իմաստությունը» [2, էջ 132]:

Մեր կարծիքով, Լ. Տոլստոյից ամերիկահայ գրողը աշխատել է յուրացնել պարզ, մատչելի գրելու փորձառությունը: Թվում է, թե նրանից է անցել կերպարների վարքագիծը դանդաղ, սակայն հիմավորապես բացահայտելու հետևողական ջանքը, միջավայրը համակողմանիորեն տեսնելու և ներքնապես ճանաչելու իր շնորհը:

Ա. Չեխովի մասին Սարոյանը մեծ ակնածանքով է խոսում: Սարոյանին գրավել է նրա մտքի հակիրճությունը: Հետաքրքիր է՝ Սարոյանը ինչո՞ւ է Չեխովին համարում իրեն անչափ հոգեհարազատ, ի՞նչն է այդպես ամերիկահայ գրողին համակել: Սարոյանի խոստովանություններից մեկում կարդում ենք. «Չեխովը ինձ ուղեկցում է ամբողջ կյանքում: Մինչև այժմ հաճախ վերընթերցում եմ նրան: Նրա մոտ ամեն ինչ, բառիս լայն իմաստով, նախանձ է արթնացնում... Նա նրբին հոգի ունի, նրբին քնարականություն, անկեղծություն, և Չեխովի մոտ նույնիսկ անհաշտվողականությունը և արիությունը նրբին է» [3, էջ 221]:

Ռուս գրողներից Սարոյանի ուշադրության կենտրոնում է եղել նաև Ն. Գոգոլը, որից, ինչպես խոստովանել է նա, դեռ շատ բան ունի սովորելու: «Ինձ միշտ զարմացնում է, թե Գոգոլը ինչպես է կարողանում ցույց տալ տարբեր մարդկանց, տարբեր դիմանկարներ, տարբեր բնավորություններ և ընդամենը երկու-երեք ստույգ գծով» [3, էջ 221]:

Վ.Սարոյանը միշտ բարձր է գնահատել ռուս գրականությունը, որը մեծապես ազդել է համաշխարհային գրականության վրա՝ իր խոր փիլիսոփայությամբ, պարզությամբ, կերպարներ կերտելու արվեստով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անահիտ, Փարիզ, 1899, Ա տարի, թիվ 11:
2. **Սարոյան Վ.** Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր.- Երևան, «Նաիրի» հրատ., 1999, 132 էջ:
3. Գրական թերթ 1978, 1 սեպտեմբերի:

#### Б.Ж. ГАЛСТЯН

#### В.ИЛЬЯМ САРОЯН О РУССКИХ ПИСАТЕЛЯХ

Рассматриваются литературные взгляды В. Сарояна о русской литературе и русских писателях.

**Ключевые слова:** русская литература, национальное и всеобщее единство, психологическая глубина, образ, реализм, художественное мышление, личность.

**B.J. GALSTYAN**

**WILLIAM SAROYAN ABOUT RUSSIAN WRITERS**

The literary views of W. Saroyan of Russian literature and Russian writers are considered.

**Keywords:** Russian literature, national and universal unity, psychological depth, artistic way of thinking, individuality.

ՀՏԴ 001.4:378(076.5)

**Շ.Բ. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

**ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ  
(Գյումրի)**

Ներկայացվում է տերմինային հապավումների կազմության առանձնահատկությունների գործնական ուսուցումը՝ համաձայն տեխնիկական բուհի «Հայոց լեզու և գրականություն» դասընթացի առարկայական ծրագրի:

**Առանցքային բառեր.** տերմինային հապավումներ, ուսուցում, քննարկում, փոխառյալ հապավումներ, կառուցվածքային վերլուծություն, բառաստեղծումներ:

**Ներածություն:** ՀՀ-ում տնտեսական, քաղաքական, իրավական, կրթամշակութային և մեդիա դաշտում տեղի ունեցող ամենօրյա փոփոխությունների հետևանքով առաջ են գալիս նորանոր բառաստեղծումներ, տերմիններ: Տերմինի մասին առաջին կուրսի ուսանողը որոշակի գաղափար ունի դեռևս 10-րդ դասարանում հայոց լեզվի դասընթացի ուսումնասիրվող նյութից: Սակայն տերմինի մասին լայն տեղեկատվություն տրվում է արդեն բուհի առաջին (ուսումնական պլանների փոփոխման արդյուքում՝ այսօր նաև II) կուրսում հայոց լեզվի առարկայական ծրագրին համապատասխան, որն ապահովված է գրականությամբ [1,2]: Հիմնական աղբյուր հանդիսացող դասագրքում [3] ուսուցանվում են տերմինի սահմանումը, բառի և տերմինի միջև եղած նույնություններն ու տարբերությունները, իմաստաբանությունը, կառուցվածքը, տերմինային համակարգերը, տերմինային կապակցությունները: «Տերմինային կապակցություններ» ենթաթեմայի բաղկացուցիչ մասն են կազմում դրանց հենքով ձևավորվող տերմինային հապավումները:

Վերջին շրջանում տնտեսական, քաղաքական, կրթամշակութային, իրավական և մեդիա դաշտում սրաթոփչ զարգացող տերմինային հապավումների